ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Գրիգոր Գրիգորյանը ծնվել է 1930 թ. մարտի 2-ին Հյուսիսային Օսիայի Վլադիկավկազ քաղաքում, հոգևորականի ընտանիքում: 1937 թ. Գրիգորյանների ընտանիքը տեղափոխվում է Երևան, որտեղ ապագա հայագետը հաճախում է N 11 դպրոցը: 1947-1949 թթ. Գրիգոր Գրիգորյանն ուսանում է Էջմիածնի Հոգևոր ճեմարանում, 1950-1954 թթ.՝ Երեվանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետում: ԲՈՒՀ-ն ավարտելուց հետո գործուղվում է Եղեգնաձորի շրջան, նշանակվում Հորս գյուղի դպրոցի տնօրեն: 1956-1960 թթ. Հայ-պետհրատում աշխատում է որպես ավագ սրբագրիչ:

Գիտական որոնումների շրջանը Գրիգորյանի կյանքում սկսվում է 1963 թվականից, երբ «Պատմաբանասիրական հանդեսում» հրատարակվում է ապագա գիտնականի անդրանիկ հոդվածը՝ «Դիտողություն միջնադարյան մի տուրքի մասին». մեկ տարի առաջ նա աշխատանքի էր անցել Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գիտությունների ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտում, որտեղ շարունակում է իր հայրենանվեր գործը մինչ օրս՝ ավագ լաբորանտից հասնելով առաջատար գիտաշխատողի և վիմագրության բաժնի վարիչի պաշտոնի:

Ի սկզբանե անխոնջ հետազոտողի հետաքրքրությունների կիզակետը Սյունյաց աշխարհն էր: Գիտական կյանքի արշալույսն ապրող հայագետը նվիրվում է Սյունիքի վանական խոշոր միաբանությունների վարչատնտեսական գործունեության ուսումնասիրությանը: Արդյունքը լինում է «Սյունիքի վանական կալվածատիրությունը IX-XIII դարերում» թեկնածուական ատենախոսությունը, որը պաշտպանում է 1967 թ. (առանձին գրքով հրատարակվել է 1973 թ.)՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Թեև աշխատությունը նվիրված է Սյունյաց վանքերին, այդուհանդերձ, պարունակում է առհասարակ հայոց վանքերին վերաբերող շատ ու շատ արժեքավոր բացահայտումներ:

Հաջորդ մեծարժեք գործը «Սյունիքը Օրբելյանների օրոք» (1981 թ.) ուսումնասիրությունն է, որտեղ հեղինակը, հիմնվելով մատենագրական և վիմագրական վկայությունների վրա, հետազոտել է Սյունիքի քաղաքական-տնտեսական և մշակութային կյանքը՝ սելջուկ-թուրքերի, թաթար-մոնղոլների և թուրքմենական ներխուժումների ժամանակաշրջանում, ներկայացրել հայ-վրացական զինակցության շնորհիվ Սյունիքում Օրբելյանների հաստատման, նրանց՝ գերիշխանության հասնելու և միջավատական հարաբերությունների իրական պատկերը, տվել Սյունիքի կրթամշակութային օջախների հակիրճ նկարագիրը:

Սյունիքին էր նվիրված նաև Գրիգորյանի դոկտորական ատենախոսությունը՝ «Սյունիքի հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական

պատմությունը IX-XV դարերում»: Սույն աշխատության մեջ վիմագրական և մատենագրական սկզբնաղբյուրների հիման վրա ներկայացված է լեռնաշխարհում տիրող քաղաքական իրավիճակը և իշխանական տների ծավալած գործունեությունը՝ հատկապես բարձրագույն դպրոցների բացման և պահպանման ուղղությամբ:

1990 թ. Երևանում հրատարակվում է "Очерки истории Сюника (IX-XV вв.)" ուսումնասիրությունը, որտեղ ներկայացված են նոր գրավոր աղբյուրներ, մասնավորապես, հեղինակի կողմից Վահանավանքի՝ Սյունյաց տիրակալների հանգստարանների պեղումների ժամանակ հայտնաբերված վիմական արձանագրությունները:

Ռուսաստանյան գիտական շրջանակներում լայն արձագանք գտավ 2004 թ. Մոսկվայում լույս ընծայված "Род Орбелянов и история Сюника в IX-XV вв." աշխատությունը, որը շարադրված է փաստական հարուստ նյութի՝ մատենագրական և վիմագրական սկզբնաղբյուրների հիման վրա: Այստեղ ականավոր միջնադարագետ-պատմաբանը հանգամանորեն քննարկել է հարևան երկրի պատմաբաններ Զ. Բունիաթովի, Դ. Ախունդովի, Ֆ. Մամեդովայի և այլոց հավակնոտ տեսությունները Արցախի և Սյունիքի անցյալի վերաբերյալ. Գրիգոր Գրոգորյանը ոչ թե պախարակում, այլ փաստացի, հիմնավոր խոսքով հերքում է կովկասյան ժողովուրդների պատմությունը խեղաթյուրողներին և տարածքային հավակնություններ ունեցող քաղաքական վերնախավի «գիտական» կամակատարներին:

Գ. Գրիգորյանը պատմաբան Սերգեյ Հախվերդյանի հեղինակակցությամբ կազմել է բուհական ձեռնարկ՝ նվիրված Սյունյաց աշխարհի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի լուսաբանմանը՝ հնագույն ժամանակներից մինչ մեր օրերը:

Այնուհանդերձ, Սյունիքում կա ճարտարապետական մի գոհար, որի նկատմամբ առանձնակի գորովանք ունի ականավոր գիտնականը: Դա X դ. Զագիկ իշխանի որդի Վահանի կառուցած Վահանավանքի վանական համալիրն է: 1966 թ. Գրիգոր Գրիգորյանը նշանակվում է Կապանի հնագիտական արշավախմբի ղեկավար: Արշավախմբի նպատակն էր պեղումներ կատարել հայ ճարտարապետության Սյունաց դպրոցի առավել հայտնի հուշարձանախմբերից մեկում՝ Վահանավանքում: Այդ ժամանակվանից սկսած՝ Վահանավանքը դառնում է ջանադիր հետազոտողի գիտական պրպտումների առանցքը: Ավելի քան քառասնամյա աշխատանքի շնորհիվ հայտնաբերվում են պատմագիտական մեծ արժեք ունեցող մի քանի տասնյակ վիմագրեր՝ Սյունիքի և Աղվանքի արքայատան ներկայացուցիչների, ինչպես նաև հոգևոր գործիչների մասին: Հայտնաբերված վիմագրերը նորություն են հայագիտության, ի մասնավորի Սյունիքի և Արցախի միջնադարյան պատմության հիմնահարցերը լուսաբանելու առումով: Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ էր դրվում Սյունյաց արքայատան ներկայացուցիչների գահացանկը՝ նշելով նրանց գահակալության ստույգ տարեթվերը, որոնք մինչև վերջերս ոչ լիարժեք էին ներկայացվում հայագիտական աշխատություններում: Մի քանի տասնամյակ տևած աշխատանքների արդյունքները ամփոփվել են 2007 թ. լույս տեսած «Վահանավանք. պատմա-հնագիտական ուսումնասիրություն» երկլեզու՝ հայերեն և ռուսերեն գրքում:

Վահանավանքի՝ տարբեր տարիների պեղումներին մասնակցել են հարյուրավոր ուսանողներ, որոնցից մի քանիսը հետագայում դարձան գիտության, արվեստի, կրթության, քաղաքականության և այլ բնագավառների կարկառուն ներկայացուցիչներ:

Վահանավանքի պեղումները ղեկավարելու տարիներին եռանդուն հետազոտողը թղթին է հանձնել առավել հիշարժան դեպքերն ու իրադարձությունները, որոնք առանձին գրքով (հայերեն և ռուսերեն) լույս են տեսել 2009 թ.՝ «Վահանավանքի վերածնունդը (հնագետի օրագրից)» վերնագրով: Խոսելով պեղումների այն մասնակիցների մասին, ովքեր մեզ հետ չեն, հեղինակը գրում է. «Գործող անձանցից» շատերն այսօր մեզ հետ չեն. նրանց երբեք չի կարելի մոռանալ: Այս գիրքը մի կերոն է նրանց հիշատակը հավերժացնելու ճանապարհին»:

Գիտնականի հիմնական զբաղմունքը, հայոց քարե մատյանների ուսումնասիրությունն է: 1981 թ. Գրիգոր Գրիգորյանը ղեկավարում է Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժինը: Մեծ եռանդով լծվելով աշխատանքի՝ նա լուրջ ներդրում է արել և շարունակում է անել հայ վիմագրագիտության բնագավառում: Հիշատակելի է հայկական գաղթօջախների վիմական արձանագրությունների ուսումնասիրությունը: 1960-ական թթ. վերջերին Խորհրդային Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ կազմվելու էր վիմագրական արշավախումբ՝ Խորհրդային Միության տարածքում երբեմնի հայկական գաղթօջախների հայերեն և հայերին վերաբերող այլալեզու վիմագրերը հավաքելու և գիտական հիմունքներով տպագրելու համար: Շուրջ քսան տարի հայ-ուկրաինական և հայ-ռուսական միացյալ արշավախմբերը Գրիգոր Գրիգորյանի գլխավորությամբ ուսումնասիրեցին Մոլդովայի, Ուկրաինայի և Ռուսաստանի Դաշնության տարածքում գտնվող հայերեն և հայերին վերաբերող ավելի քան 1500 վիմագիր, ինչպես նաև Ուկրաինայի և Ռուսաստանի թանգարաններում պահվող թանգարանային իրերի բազմաթիվ հայերեն մակագրություններ: Այս աշխատատար գործի մի ծանրակշիռ մասն իր ուսերին կրեց հայ վիմագրագիտության երախտավորը: Նրա աշխատասիրությամբ, գիտարշավների արդյունքները հրատարակվեցին «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի 7-րդ և 8-րդ պրակներում:

Գրիգորյանի մասին շնորհակալությամբ են խոսում Կրեմլի Զինապալատի, Մոսկվայի Պատմության կենտրոնական թանգարանի, Թեոդոսիայի Հայկական քարեղարանի գիտական աշխատակիցները, որոնց խնդրանքով՝ պրոֆեսոր Գրիգորյանը ռուսերեն է թարգմանել բազմաթիվ գրաբարյան բնագրեր, հիմնադրել թանգարանային առանձին բաժիններ: Գիտնականին է վստահվել նաև Թեոդոսիայի Սուրբ Սարգիս եկեղեցու սրահներում բացված՝ Խորհրդային Միության մեջ առաջին Հայկական քարեղարանի արձանագրությունների ռուսերեն թարգմանությունը:

Բացառիկ արժեք ունեն Գր.Գրիգորյանի՝ գրաբարյան վիմական բնագրերի ռուսերեն թարգմանությունները, որոնք խիստ կարևոր սկզբնաղբյուրներ են կովկասագիտության համար: Այդ բնագրերի հրապարակումից հետո Ադրբեջանի Հանրապետության «միջնադարագետները» դադարեցրին անիմաստ պնդումները, թե իբր Սյունիքն ու Արցախը եղել են «Կովկասյան Ալբանիայի ծայրամասային գավառներ»:

Հիշատակելի է և այն, որ Կրեմլի Զինապալատի թանգարային բաժնի վարիչ Մ. Պոստնիկովայի խնդրանքով, Գրիգորյանն ուսումնասիրել է «Վրացական» հորջորջվող ֆոնդը և պարզել, որ այնտեղ պահվող 26 իրերից 21-ն ունեն հայերեն, 3-ը՝ հունարեն և ընդամենը 2-ը՝ վրացերեն արձանագրություններ. ֆոնդը վերանվանվել է «Հայկական»:

Գ. Գրիգորյանը որոշ արձանագրություններ փրկել է կորստից. Այվազովսկու տուն-թանգարանի ծովահայաց պատին կային ավազով պատված

հայերեն արձանագրություններ: Համառ ջանքերի շնորհիվ ավազը մաքրվել է և վերականգնվել մեսրոպատառ արձանագրությունը: Ավազից ազատվել են նաև Կիևի Սուրբ Սոֆիա տաճարի պատերին փորագրված 24 հայերեն արձանագրությունները: Նրա գրչին է պատկանում հայ վիմագրության բուհական ձեռնարկը՝ առաջինը հայ իրականության մեջ: Հայ վիմագրագիտության ասպարեզում Գր. Գրիգորյանն այսօր էլ շարունակում է մեծ եռանդով աշխատել. հավաքվել և վերծանվել են 375 նորահայտ վիմագրեր, որոնց պետք է ավելանան նորերը՝ համալրելով պատմական Սյունիքի Բ պրակը:

Գր. Գրիգորյանը հեղինակ է բազմաթիվ գիտական հոդվածների, որոնց մի մասը հրապարակվել է արտասահմանում: Նա հոդվածներ է գրել նաև «Հայկական Սովետական Հանրագիտարանի» և «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանի համար: Սեփական ժողովրդին մշտապես ծառայող մտավորականը հաճախ զեկուցումներով հանդես է գալիս Զանգեզուրի աշխատավորության, ուսանող երիտասարդության առջև, տարածաշրջանում տեղակայված զինվորական ստորաբաժանումներում:

Մեծ է Գրիգորյանի ներդրումը երիտասարդ գիտական կադրերի աճեցման գործում: Պրոֆեսորը շուրջ մեկ տասնյակ ասպիրանտների գիտական ղեկավար էր և է: Նրանցից շատերը դարձել են գիտության թեկնածու:

Գիտական աշխատանքին զուգահեռ՝ Գր. Գրիգորյանը զբաղվում է մանկավարժական գործունեությամբ: 1973 թ. դասախոսում է իր հարազատ ԲՈՒՀ-ում՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում, այնուհետև նաև՝ Երևանի պետական համալսարանում: Երեք տարի, ակադ. Վարազդատ Հարությունյանի հրավերով, գրաբար և վիմագրություն է դասավանդել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության բաժնում:

Գր. Գրիգորյանն իր երկրի իսկական քաղաքացին է: 1980-ական թթ. վերջին և 90-ական թթ. սկզբին՝ Արցախյան շարժման և ԽՍՀՄ փլուզման ժամանակաշրջանում, նա Արցախին և արցախահայությանը հուզող տարատեսակ հարցերով բազմիցս դիմել է խորհրդային ղեկավարությանը՝ նամակներ ու հեռագրեր հասցեագրելով խորհրդային ղեկավարներին, ԽՍՀՄ ներքին գործերի նախարարությանը, Գերագույն խորհրդի պատգամավորներին, կենտրոնական մամուլի և հեռուստատեսության պատաս-խանատուներին՝ փորձելով ինչ-որ չափով թեթևացնել հայրենակիցների վիշտն ու տառապանքը: 2005 թ. այդ նամակները հրատարակվեցին առանձին գրքով՝ «Ղարաբաղյան օրագիր (1988-1992)» վերնագրով:

Նկատի ունենալով պորֆ. Գրիգորյանի գիտական մեծ վաստակը՝ սույն թվականի մարտի 24-ին նրան շնորհվել է գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

Այսպիսով, հանձին Գրիգոր Գրիգորյանի՝ մեզ ներկայանում է հայագիտության անխոնջ մշակը, բազմավաստակ մանկավարժն ու իր ժողովրդի հոգսերով ապրող քաղաքացին:

Շնորհավո՛ր ութսունամյակդ, սիրելի՛ ուսուցչապետ:

ԲԱԼՈՅԱՆ Հ. Ս.
Բանասիրական գիտությունների թեկնածու